ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ. Նիկողոսյան Ե. Ռ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Մտավոր սեփականության իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Մտավոր սեփականության իրավունք» դասընթացի շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են մայրցամաքային (Ռուսաստան, Հայաստան, Ֆրանսիա և այլն) և ընդհանուր իրավունքի համակարգերում (Անգլիա, ԱՄՆ և այլն) մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունները, հեղինակային և հարակից իրավունքների, արտոնագրային իրավունքի հիմնական հասկացությունները և տեսական դրույթները, մտավոր սեփականության իրավունքի որոշակի օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների պաշտպանության և բացառիկ իրավունքների փոխանցման առանձնահատկությունները: Դասընթացի շրջանակներում մեծ ուշադրություն է դարձվում Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի՝ մտավոր սեփականության իրավունքների հետ կապված վեճերում դատական պրակտիկայի հիմնական մոտեցումներին, ինչպես նաև քննարկման առարկա են հանդիսանում Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայի նյութերը:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Մտավոր սեփականության իրավունք» առարկայի ուսումնասիրության **նպատակն է** ուսանողների մոտ ձևավորել տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և կարողություններ՝ իրավաբանի մասնագիտական գործունեության մեջ մտավոր սեփականության օբյեկտների ստեղծման և օգտագործման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի կիրառման նպատակով:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ **խնդիրները.**

Դասընթացի խնդիրներն են՝ ուսանողների մոտ զարգացնել մտավոր սեփականության օբյեկտների քաղաքացիաիրավական պաշտպանության մասին գիտելիքների համալիր, մասնավորապես՝ մտավոր գործունեության արդյունքների և դրանց հավասարեցված՝ իրավաբանական անձանց, ապրանքների, աշխատանքների,

ծառայությունների անհատականացման միջոցների վերաբերյալ, նորմատիվ-իրավական նյութի հետ աշխատելու հմտությունների զարգացումը, ձեռք բերված գիտելիքների ինքնուրույն կիրառումը. մտավոր սեփականության օբյեկտների առնչությամբ ծագող իրավահարաբերությունների վերլուծության մեթոդաբանության տիրապետումը:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի **օբյեկտն** այն իրավահարաբերություններն են, որոնք կարգավորվում են մտավոր սեփականության իրավունքի նորմերով: Հիմնականում դրանք մտավոր գործունեության արդյունքների, ինչպես նաև անհատականացման միջոցների ստեղծման, օգտագործման և պաշտպանության հետ կապված հարաբերություններ են:

Դասընթացի **առարկան** են մտավոր գործունեության արդյունքներն ու անհատականացման միջոցները: Դրանք են. բնօրինակ ստեղծագործությունները (գրական, գեղարվեստական, երաժշտական և այլն), գյուտերը, օգտակար մոդելները (կարճաժամկետ արտոնագրերը), արդյունաբերական դիզայնը, ապրանքային նշանները, արտադրության գաղտնիքները (նոու-հաու), մտավոր սեփականության մասին օրենսդրությամբ սահմանված այլ օբյեկտներ:

Դասընթացի մուտքային պահանջները

Սկսելով դասընթացը՝ ուսանողները պետք է ունենան գիտելիքներ և հմտություններ քաղաքացիական իրավունքի ոլորտում:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. «Մտավոր սեփականություն» և «մտավոր սեփականության իրավունք» հասկացությունների, մտավոր սեփականության օբյեկտների և դրանց նկատմամբ իրավունքների իրավական կարգավորման, դրանց պահպանության, մտավոր սեփականության տարբեր ոլորտներում կիրառվող միջազգային իրավական ակտերի, ինչպես նաև տարբեր երկրների դատական պրակտիկայի վերաբերյալ գիտելիքներ:

2. Մտավոր սեփականության իրավունքի որոշակի օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների պաշտպանության և փոխանցման առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ:

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է խորացված հետազոտել և վերլուծել մտավոր սեփականության հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմերը:

2. Կարող է աշխատել մտավոր սեփականության վերաբերյալ նորմատիվ ակտերի, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերի հետ:

3. Կարող է գտնել գործնական խնդիրների վերլուծության և լուծման ուղիներ:

4. Կարող է կազմել մտավոր սեփականության իրավունքի ոլորտում հիմնական քաղաքացիաիրավական փաստաթղթերի նախագծեր:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է կիրառել կոնկրետ իրավիճակում տեսական գիտելիքներ, օրենսդրություն և դատական պրակտիկա:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝***

1. Ունակ է մասնագիտական գործունեություն ծավալել զարգացած իրավագիտակցության, իրավամտածողության և իրավական մշակույթի հիման վրա:
2. Ունակ է ապահովել իրավունքի սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների պահպանումը:
3. Ունակ է կանխել իրավախախտումները, բացահայտել և վերացնել դրանց կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները:
4. Ունակ է ճիշտ և լիարժեք արտացոլել մասնագիտական գործունեության արդյունքները իրավական և այլ փաստաթղթերում:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Նյութի ներկայացում սլայդերի կիրառմամբ, խնդիրների լուծում, դատական նախադեպերի քննարկում և վերլուծություն, նյութին առնչվող ինտերնետային կայքերից օգտվելու հմտությունների ձևավորում:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Կամընտրական դասընթացների կրթաբլոկում»՝ **2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ)** աշխատատարությամբ, որից **16 ակադեմիական ժամ** նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել **4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում**:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**

1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1.Դասախոսություններ	**16**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**16**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**27**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**13**
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**6**
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**7**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք գնահատակա նով**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Ընդհանուր դրույթներ մտավոր սեփականության իրավունքի մասին	**2**	**1**	**1**
Թեմա 2. Հեղինակային իրավունք (Ընդհանուր դրույթներ)	**3**	**2**	**1**
Թեմա 3. Հեղինակային իրավունքի սուբյեկտները	**2**	**1**	**1**
Թեմա 4. Հեղինակային իրավունքի ոլորտում կնքվող պայմանագրերը	**2**	**1**	**1**

Թեմա 5. Հարակից իրավունքների պահպանությունը	2	1	1
Թեմա 6. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը	2	1	1
Թեմա 7. Արտոնագրային իրավունք	4	2	2
Թեմա 8. Արտոնագրային իրավունքի սուբյեկտները	3	2	1
Թեմա 9. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքները	2	1	1
Թեմա 10. Ապրանքային և սպասարկման նշաններ	4	2	2
Թեմա 11. Ապրանքային նշանների գրանցումը	2	1	1
Թեմա 12. Աշխարհագրական նշումներ, ծագման տեղանուններ	4	2	2
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Մտավոր սեփականության իրավունքի պատմությունը. Մտավոր սեփականության հասկացությունը, «Մտավոր սեփականություն» և «սեփականություն» եզրույթները. Մտավոր սեփականության իրավունքի օբյեկտները, դասակարգումը, առանձնահատկությունները. ՄՍԻ օբյեկտների նկատմամբ իրավունքները (բացառիկ իրավունքները, անձնական ոչ գույքային իրավունքները). Բացառիկ և ոչ գույքային իրավունքների պաշտպանությունը։

Թեմա 2. Հեղինակային իրավունքի միջազգային-իրավական ահպանությունը (այդ թվում՝ 1886թ. Բեռնի կոնվենցիա և այլն). Հեղինակային իրավունքի հասկացությունը,

առանձնահատկությունները,սկզբունքները. Ստեղծագործության հասկացությունը որպես հեղինակային իրավունքի օբյեկտ, ստեղծագործության տեսակները. Հեղինակային իրավունքով չպաշտպանվող ստեղծագործությունները։

Թեմա 3. Ստեղծագործության հեղինակը։ Համահեղինակություն. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները (moral rights). Հեղինակի գույքային իրավունքները. Գույքային իրավունքների սահմանափակումները։

Թեմա 4. Գույքային իրավունքների փոխանցումը. Լիցենզային պայմանագիր (բացառիկ, ոչ բացառիկ, բաց լիցենզիաներ (CC)). Այլ պայմանագրեր (հեղինակային պատվերի և այլն)։

Թեմա 5. Հարակից իրավունքների հասկացությունը ՀՀ և այլ երկրների օրենսդրությամբ. Հարակից իրավունքների տեսակները. Կատարողների, հնչյունագիր արտադրողների, հեռարձակող կազմակերպության իրավունքները։

Թեմա 6. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության եղանակները. Բացառիկ և անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները։

Թեմա 7. Արտոնագրային իրավունք. Արտոնագրային իրավունքի օբյեկտները. Միջազգային-իրավական պահպանությունը. Գյուտի հասկացությունը, արտոնագրաունակության պայմանները. Օգտակար մոդելի (կարճաժամկետ արտոնագրեր) հասկացությունը, արտոնագրաունակության պայմանները. Արդյունաբերական դիզայնի հասկացությունը, արտոնագրաունակության պայմանները։

Թեմա 8. Արտոնագրային իրավունքի սուբյեկտները. Արտոնագրային իրավունքի սուբյեկտները. Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ

իրավունքները, պարտականությունները, սահմանափակումները, իրավունքների դադարեցումը. Արտոնագրային իրավունքների պաշտպանությունը։

Թեմա 9. Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքները. Ֆիրմային անվանման հասկացությունը, բովանդակությունը, գրանցման առանձնահատկությունները. Ֆիրմային անվանման նկատմամբ բացառիկ իրավունքը, ՖԱ օգտագործումը. Ֆիրմային անվանման և այլ անհատականացման միջոցների հարաբերակցությունը։

Թեմա 10. Ապրանքային և սպասարկման նշաններ. Ապրանքային (սպասարկման) նշանների հասկացությունը. Ապրանքային (սպասարկման) նշանների իրավական պահպանությունը. Ապրանքային (սպասարկման) նշանների նկատմամբ բացառիկ իրավունքները, փոխանցումը, դադարումը. Հանրահայտ ապրանքային նշաններ։

Թեմա 11. Ապրանքային նշանների գրանցումը. Ապրանքային նշանների առաջնությունը. Ապրանքային նշանների գրանցման փուլերը, բողոքարկումը. Ապրանքային նշանների միջազգային գրանցումը։

Թեմա 12. Աշխարհագրական նշումներ, ծագման տեղանուններ. Աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների հասկացությունը. Աշխարհագրական նշումների (ծագման տեղանունների) միջազգային-իրավական կարգավորումը, Աշխարհագրական նշումների (ծագման տեղանունների) հարաբերակցությունը ապրանքային նշանների հետ։

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (1998թ.)

3. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք (2006թ.)

4. «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենք (2021թ.)

5. «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենք (2021թ.)

6. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք (2010թ.)

7. Բարսեղյան Տ.Կ., Հովհանիսյան Ա.Ա., *Մտավոր սեփականության իրավունք*: - Երևանի պետ. Համալս. – Եր.: «Ասողիկ» հրատ., 2012 – 304 էջ

8. Ղարախանյան Գ.Հ., Բարսեղյան Տ.Կ., Բեքմեզյան Գ.Հ., Հայկյանց Ա.Մ., Հովհաննիսյան Ա.Ա., *Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք (երրորդ մաս)*/ Խմբ.՝ Տ.Կ. Բարսեղյան, Գ.Հ. Ղարախանյան – (4-րդ հրատ.՝ լրացումներով և փոփոխություններով) – Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 504

9. Dornis T.Trademark and Unfair Competition Conflicts. 2017. p. 644

10. Field T., Fundamentals of Intellectual Property. Cases and Materials. Franklin Pierce Law Center, 2009, p. 470

11. Goldstein P., International Copyright: Principles, Law and Practice//New York, Oxford University Press, 2001, p. 640

12. Kur A. Dreier T. European Intellectual Property Law. Text. Cases and Materials. 2013, p. 547

13. Близнец И.А., Право интеллектуальной собственности. М.: «Проспект», 2016, с. 896

14. Гражданское право: в 3 т./ под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Т.3, М.: «Проспект», с. 780

15. Калятин, В. О. Право интеллектуальной собственности. Правовое регулирование баз данных : учебное пособие для бакалавриата и магистратуры / В. О. Калятин. — Москва : Издательство Юрайт, 2019. — 186 с.

16. Право интеллектуальной собственности. Т.1. Общие положения, учебник под ред. Л.А. Новоселовой, М.: Изд.-во «Статут», 2017 г., ст. 508

17. Рахматулина Р.Ш., Свиридова Е.А. Актуальные проблемы права интеллектуальной собственности. Уч. пособие. Москва. Изд.-во «Прометей». 2018 г., с. 194

<u>Միջազգային կոնվենցիաներ</u>

1. Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիա (1883)

2. Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիա (1886)

3. Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին կոնվենցիա (1961)
4. Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS) (1994)
5. Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիր (PCT) (1970)
6. Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագիր (1891)
7. Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրություն (1989)